«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԸ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի նպատակը

Սույն օրենքի նպատակը «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության առաջին էներգաբլոկը շահագործումից հանելու գործընթացի (այսուհետ՝ շահագործումից հանելու գործընթաց) ապահովումն է:

Հոդված 2. Շահագործումից հանելու գործընթացի իրականացումը

Շահագործումից հանելու գործընթացն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի և Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անվտանգության ստանդարտների պահանջներին համապատասխան:

Հոդված 3. Անվտանգության պահանջների ապահովումը

Շահագործումից հանելու գործընթացն իրականացնելիս Հայաստանի Հանրապետության կառավարությունը ապահովում է միջազգային կոնվենցիաներով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումը և Հայաստանի Հանրապետության միջուկային ու ճառագայթային անվտանգության նորմերի պահանջները:

Հոդված 4. Շահագործումից հանելու ռազմավարության մշակումը

Շահագործումից հանելու ռազմավարությունը մշակում և դրան հավանություն է տալիս Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 5. Հասարակությանը տեղեկատվության տրամադրումը

Շահագործումից հանելու գործընթացի իրականացման ընթացքի մասին հասարակությանը և բնապահպանական կազմակերպություններին պարբերաբար տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 6. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: